

Директ

Универсальное приложение

891.990
12-12

ՌԱՐԵԼ

30 MAY 2011

ՏԱՏԻԿԻ ԱՔԱՂԱՂԸ



891.995
Ռ-12

ՊԵՏԶՐԱՏ

գր
36647

ՌԱԲԵԼ

391.99.5

Ռ-12

ՏԱՏԻԿԻ
ԱՔԱՂԱՂԸ



ՀԽՍՀ
ՀԱՅԵՐ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵՑԱՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1938

4574.



20773-59

Մեր զրացի տատին պառավ
Ուներ հինգ հատ լավ, սիրուն հավ,
Մեկ ել խոշոր մի աքաղաղ՝
Կարմրակատար, հոնքերը կախ:

Տառը սիրում եր հավերին
Ու լավ պատվում մեծ աքլորին,
Իսկ աքլորը պարտաճանաչ
Միշտ հսկում եր սրբաականջ:

Քայլվածք ուներ ծանր ու հպարտ,
Չայնը բարձր, գիլ ու անպարտ,
Վրան նախշուն հազար փետուր,
Իսկ բիտերը փնց սրբած թուր:

Արևմուտին պառավ տատին
Միշտ կանչում եր իր հավերին,
Բունը բացում, ներս եր անում,
Հետո գնում հանգիստ քնում:

Արշալույսին՝ ծեղը — ծեղին

Նորից կանչում եր բոլորին,
Կուտ եր տալիս, կերակրում,
Հետո դեպի դաշտը քշում:

Մի աղվես կար այնտեղ ապրող,
Շատ սրամիտ և քիչ ել գող.
Միշտ տեսնում եր մեր աքլորին՝
Շուրջը գցած իր հավերին:

Ու աղվեսը միտք եր անում,
Որը մի նոր բան հնարում,
Ինչպե՞ս անի, վոր տուն տանի,
Այդ աքլորին խելքից հանի:

Նրա բախտից մի որ դաշտում
Անձրև յեկավ խիստ վարարուն,
Աղվեսը շատ ուրախացած՝
Թռավ առաջ բերանը բաց:

— Աղս ախպեր, խելոք աքլոր,
Շատ վարար ե անձրևն այսոր,
Վայ թե մրսեն քույրիկներս,
Իմ նազելի թունթուններս:

Յես տուն ունեմ այստեղ մոտիկ,

Սարք ու կարգին, շատ գեղեցիկ,
Վատ չեր լինի՝ այս անձրևին
Ներս բերեյիր քո հավերին:



Կարմիր, դեղին փուփուլավոր,
Ջեղ տեսնում եմ յես ամեն որ,
Բայց ի՞նչ անեմ, վոր ծանոթ չենք,
Իրար մոտ ել գնալ-զալ չունենք:

Աքաղաղը մեկ խոժուկեց,
Մեկ ել վիզը յերկարացրեց
Ու թեք աչքով նայեց վրան,
Հպարտ ձայնով ասաց նրան.



— Կհավատամ միթե յես քեզ
Իմ հավերիւն խոնարհ ու հեզ.
Լավ վարպետ ես խարդախության,
Բայց չեմ խաբւի քո ստության:

— Այ աքաղաղ, դու ել այդպես,
Մի լավ նայիր, հավերիւդ տես,
Գոնե թույլ տուր այս մորթիով
Ծածկեմ նրանց շտապ կերպով:

Ու նա հանեց թևի տակից
Մի մեծ մորթի իրենց ցեղից,
Ծածկեց թրջված հավիկներին,
Խեթ-խեթ նայեց մեր աքլորին:

— Գուցե հիմա կրցանկանաս,
Իմ ծածկի տակ հանգստանաս,
Մինչև անձրևը կըղաղարի
Ու արևը լավ կըփայլի:

— Շնորհակալ եմ այդ քո պատվից,
Չեմ վախենում յես անձրևից:
Այ, կմտնեմ այս թփի տակ,
Վոր հավերս չմնան մենակ:

— Դե լավ, յեթե չես հավատում,
Յես իմ մորթին յետ եմ վերցնում,—
Ասաց աղվեսը աքլորին,

Ճարպիկ կերպով քաշեց մորթին:
Ու միասին յերկու հավիկ՝
Փուփուլավոր, չալտիկ-բալտիկ,



Կոլովեցին են մորթու հետ,
Ճվճվալով կորան անհետ:

Աքաղաղը կարմրակատար
Այնպես զեց ձայնը ճարտար,
Վոր տատիկը իրենց տնից
Յեկավ հասավ մեկ անգամից:

— Ո՞ւր եք չալտիկ, դու իմ բալտիկ,
Կարմրաթուշիկ սիրո՛ւն Ամբիկ,
Փուփուլավոր թութուշ-մումուշ,
Իմ աքաղաղ կանչդ անուշ:

Այսպես տատը ձայն եր տալիս,
Իսկ անձրևը վարար գալիս,
Աղվեսն իր բանը տեսած՝
Վազ եր տալիս ուրախացած:



Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան



Գլավիտի լիազոր է 4655 Հրատ. 4324 Գառվեր 1119. Տիրաժ 3000

Պետերբուրգի առաջին տպարան, Յերեվան, Լենինի, 65

110411

ՀՀ Ազգային գրադարան



NL0402369

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

ԳՐԱԿ



ԴԱՅԵԼ
ԲԱԲՈՒՇԿԻՆԱ ՍԵՏՈՒԽ
ԴԻՅ. ԱՐՄ. ՍՏՐ ԵՐԵՎԱՆ



12313